| Գլխավոր տեղեկություն | |
|---|---|
| Համար | N 1290-Ն |
| Տիպ | Որոշում |
| Ակտի տիպ | Պաշտոնական Ինկորպորացիա (23.07.2023-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | ՀՀՊՏ 2007.11.28/59(583) Հոդ.1233 |
| Ընդունող մարմին | ՀՀ կառավարություն |
| Ընդունման ամսաթիվ | 01.11.2007 |
| Ստորագրող մարմին | ՀՀ վարչապետ |
| Ստորագրման ամսաթիվ | 16.11.2007 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 08.12.2007 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 նոյեմբերի 2007 թվականի N 1290-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձի երդման արարողակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Ս. Սարգսյան**

2007 թ. նոյեմբերի 16
Երևան

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2007 թվականի**
**նոյեմբերի 1-ի N 1290-Ն որոշման**

## Ա Ր Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԻ ԵՐԴՄԱՆ**

1. Սույն արարողակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձի (այսուհետ՝ անձ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու երդում (այսուհետ՝ երդում) տալու ընթացակարգը:

2. Երդման արարողությունը կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն), իսկ օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դեսպանությունը կամ հյուպատոսական հիմնարկը (այսուհետ՝ դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ):

***(2-րդ կետը լրաց. 02.08.12 N 983-Ն, փոփ. 23.06.22 N 923-Ն, 13.07.23 N 1155-Ն)***

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրն ստանալուց հետո ծառայությունը, իսկ օտարերկրյա պետություններում՝ դեսպանությունը կամ հյուպատոսական հիմնարկը 10-օրյա ժամկետում անձին ուղարկում է գրավոր ծանուցում՝ համաձայն N 1 ձևի, եթե դիմումատուն հարցաթերթիկում չի լրացրել իր բջջային հեռախոսահամարը և (կամ) էլեկտրոնային փոստի հասցեն և, եթե չի տվել իր համաձայնությունը՝ ծանուցումները էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու վերաբերյալ:

***(3-րդ կետը լրաց. 02.08.12 N 983-Ն, 29.11.12 N 1505-Ն, խմբ. 23.06.22 N 923-Ն, փոփ. 13.07.23 N 1155-Ն)***

4. Երդման արարողությունն իրականացվում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ծանուցման մեջ նշված ժամին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի քաղվածքին քաղաքացիություն ստացող անձը ծանոթանում է ծառայությունում, իսկ օտարերկրյա պետություններում՝ դեսպանություններում կամ հյուպատոսական հիմնարկներում՝ երդման արարողության ընթացքում:

***(4-րդ կետը լրաց. 02.08.12 N 983-Ն, խմբ. 29.11.12 N 1505-Ն, փոփ. 23.06.22 N 923-Ն, 13.07.23 N 1155-Ն)***

5. Երդման արարողությունն անցկացվում է հանդիսավոր պայմաններում՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշի առջև:

6. Երդման արարողությունը ծառայությունում սկսվում է ծառայության պետի կամ նրա տեղակալի, իսկ օտարերկրյա պետությունում՝ դեսպանությունում կամ հյուպատոսական հիմնարկում՝ դեսպանի, գլխավոր հյուպատոսի կամ նրանց կողմից լիազորված դիվանագետի ներածական խոսքով, որից հետո ընթերցվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը: Հաղթանակի և խաղաղության, Հանրապետության, Սահմանադրության կամ Անկախության կապակցությամբ նշվող տոն օրերին երդման արարողությունն իրականացվում է հատուկ հանդիսավոր պայմաններում, որին մասնակցելու համար կարող են հրավիրվել Հայաստանի Հանրապետության պետական մարմնի ղեկավարներ, հասարակական միավորումների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ՝ արարողությունը լուսաբանելու համար:

***(6-րդ կետը լրաց. 02.08.12 N 983-Ն, 29.11.12 N 1505-Ն, փոփ., լրաց. 13.07.23 N 1155-Ն)***

7. Անձը երդում է տալիս ծառայության պետի (տեղակալի), իսկ օտարերկրյա պետությունում՝ դեսպանի, գլխավոր հյուպատոսի կամ նրանց կողմից լիազորված դիվանագետի կողմից երդման տեքստը բարձրաձայն ընթերցելուց հետո՝ «երդվում եմ» բառը բարձրաձայն արտասանելով, որից հետո ստորագրում է երդման տեքստը:

***(7-րդ կետը խմբ. 29.11.12 N 1505-Ն, փոփ. 13.07.23 N 1155-Ն)***

8. Ծառայության պետը (տեղակալը), իսկ օտարերկրյա պետությունում՝ դեսպանը, գլխավոր հյուպատոսը կամ նրանց կողմից լիազորված դիվանագետը շնորհավորում է անձին երդում տալու կապակցությամբ, որից հետո հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը:

***(8-րդ կետը լրաց. 02.08.12 N 983-Ն, փոփ. 13.07.23 N 1155-Ն)***

9. Երդման ստորագրված տեքստը կցվում է անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ փաստաթղթերին:

9.1. Երդման արարողակարգի տեքստն դեսպանությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության միջոցով ուղարկվում է ծառայություն, անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ փաստաթղթերին կցելու համար:

***(9.1-ին կետը լրաց. 02.08.12 N 983-Ն, փոփ. 23.06.22 N 923-Ն, 13.07.23 N 1155-Ն)***

10. ***(կետն ուժը կորցրել է 29.11.12 N 1505-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության**
**աշխատակազմի**
**ղեկավար** **Դ. Սարգսյան**

**<u>Ձև N 1</u>**

**Ծ Ա Ն Ու Ց Ո Ւ Մ**
***(վերնագիրը խմբ. 23.06.22 N 923-Ն)***

Հարգելի _____
(ծանուցվողի անունը, ազգանունը)

Տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով Ձեզ շնորհվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Երդման արարողությանը մասնակցելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթ ստանալու դիմում ներկայացնելու համար յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը _____ ը կարող եք ներկայանալ՝

- Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն
_____ , թիվ
(հասցեն)
_____ աշխատասենյակ.

- օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դեսպանություն կամ
հյուպատոսական հիմնարկ
_____
(անվանումը, հասցեն)

թիվ _____ աշխատասենյակ:

_____ _____
Ծանուցումն ուղարկող ծառայության անվանումը օրը, ամիսը, տարեթիվը

***(ձևը խմբ. 25.03.10 N 411-Ն, լրաց. 02.08.12 N 983-Ն, խմբ. 29.11.12 N 1505-Ն, 23.06.22 N 923-Ն, փոփ. 13.07.23 N 1155-Ն)***

***(հավելվածը խմբ. 25.03.10 N 411-Ն, լրաց. 02.08.12 N 983-Ն, լրաց., խմբ., փոփ. 29.11.12 N 1505-Ն, փոփ., խմբ. 23.06.22 N 923-Ն, փոփ., լրաց. 13.07.23 N 1155-Ն)***

**Փոփոխման պատմություն**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
|---|---|
| 13.07.2023, N 1155-Ն | 23.07.2023, N 1290-Ն |
| 23.06.2022, N 923-Ն | 25.06.2022, N 1290-Ն |
| 29.11.2012, N 1505-Ն | 22.12.2012, N 1290-Ն |
| 02.08.2012, N 983-Ն | 16.08.2012, N 1290-Ն |
| 25.03.2010, N 411-Ն | 15.05.2010, N 1290-Ն |

**Փոփոխված ակտ**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
|---|---|